ՀԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
«ՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ, ՔՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է» Ե. ՉԱՐԵՆՑ
«ՀԱՅԵՐԸ՝ ԱՌԱՆՑ ԾԽԱԽՈՏԻ»

27/06/2013 Սփյուռք No comments

Դոնի Ռոստովում կբացվի հայագիտական կենտրոն

Դոնի Ռոստովում բացվելու է Հայագիտական կենտրոն՝ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, Դոնի Ռոստովի «Նոր նախիջևանի հայկական համայնք»-ի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի մասնաճյուղ հանդիսացող Հարավային գիտական կենտրոնի միջև կնքված պայմանագրի հիման վրա: Կենտրոնի ղեկավարի պարտականությունները իրականացնում է «Նոր Նախիջևանի հայկական համայնք»-ի գործադիր տնօրեն Սերգեյ Սայադովը:

«Մեր նպատակն էր բացել կենտրոն, որը շաղկապված կլինի ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, տեղի հայ համայնքի և գործընկեր գիտակրթական հաստատության հետ: Հայագիտական կենտրոնն իրականացնելու է երկու հիմնական գործառույթներ՝ գիտական և կրթական: Կրթական ոլորտում կիրականացնենք մասնագետների վերապատրաստում, կփորձենք ներգրավել տեղի երիտասարդներին կենտրոնի գործունեության մեջ՝ Հայաստանում կրթություն ստանալու հեռանկարով և այլն:

Գիտական գործունեության շրջանակում հայագիտական տարբեր թեմաների ուսումնասիրություններ կիրականացվեն, այդ թվում՝ հայ-ռուսական հարաբերությունների առանցքի շուրջ»,- ասաց ԵՊՀ ՀՀԻ-ի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանը: Նա նշեց, որ կենտրոնի ստեղծման գործում իրենց ջանքերն են ներդրել Դոնի Ռոստովի «Նոր Նախիջևանի հայկական համայնք»-ի նախագահ Արտյոմ Սուրմալյանը, գործադիր տնօրեն Սերգեյ Սայադովը, Հարավային գիտական կենտրոնի ղեկավար, ակադեմիկոս Գենադի Մատիշովը, ինչպես նաև նույն կենտրոնի Սոցիալ-տնտեսական և հումանիտար հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Լևոն Բատիևը:

Հովհաննիսյանի նախորդ տարվա՝ Դոնի Ռոստով այցելության ընթացքում կնքվել էր համագործակցության պայմանագիր ԵՊՀ-ի և Հարավային գիտական կենտրոնի միջև, որը թույլ էր տալիս նաև համատեղ գիտակրթական կենտրոն բացել: Այս տարի կնքվեց համագործակցության ևս մեկ պայմանագիր՝ արդեն համայնքի հետ: Արդյունքում հնարավոր եղավ կնքել եռակողմ պայմանագիր Հայագիտական կենտրոնի բացման վերաբերյալ: Մհեր Հովհաննիսյանը հավելեց, որ կենտրոնի գործունեության ընթացքը ավելի հստակեցնելու համար հուլիսի սկզբին Նոր Նախիջևանի հայկական համայնքի տնօրեն Սերգեյ Սայադովը այցելելու է Հայաստան: Այցի շրջանակում ԵՊՀ-ում կկայանա նաև www.hayazg.info կայքի շնորհանդեսը, որը հանդիսանում է ռուսալեզու հայագիտական համացանցային ամենամեծ հանրագիտարանը: ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ռազմավարության մեջ կարևոր տեղ է հատկացվում նաև արտաքին լսարանի հետ համագործակցությանը: Փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանի խոսքով՝ իրենք նպատակ ունեն ոչ միայն աջակցելու արտասահմանի հայագիտական կենտրոններին, այլև նպաստելու հայաշատ համայնքներում հայագիտական կենտրոնների բացմանը:

Սկզբնաղբյուրը՝ http://www.armin.am/am/news/72#.UclwuymT-2g.facebook